

### ԱՐԱՄԽԱԶԱՏՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման  
ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

## ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԻԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Հոդվածում վերլուծված են պետական ինքնիշխանության և միջազգային կազմակերպության վեր-  
պետականության հարաբերակցության հիմնախնդիրները և առաջադրվել են դրանց լուծումները ՀՀ սահ-  
մանադրական արդարադատության պրակտիկայի համատեքստում: Աշխատանքում հեղինակի կողմից  
ուսումնասիրվել են վերապետականությունը բնութագրող կողմերը, անդրադարձ է կատարվել ՀՀ Սահմա-  
նադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակում տրված ինքնիշխանության հիմնա-  
կան բնութագրիչների վերլուծությանը: Մույն հոդվածի հետազոտության շրջանակում հեղինակը հանգում  
է այն եզրահանգման, որ ինքնիշխանության գերակայությունը հանդիսանում է պետության անկախու-  
թյան հիմք, որը միաժամանակ արժեքանական նշանակություն է հաղորդում միջազգային իրավունքի հա-  
մընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքի՝ պետությունների ինքնիշխան հավասարության հարգմանը:

*Հիմնարարներ – ինքնիշխանություն, վերապետականություն, սահմանադրական արդարադատության  
պրակտիկա, ինքնիշխանության և վերապետականության հարաբերակցություն:*

Հայաստանի Հանրապետությունում սահմա-  
նադրական արդարադատության առնչություններն  
պետության ինքնիշխանության երաշխավորման և  
միջազգային կազմակերպության վերապետակա-  
նության հիմնախնդիրն առավել քան հրատապ է՝  
հատկապես, սահմանադրական բարեփոխումների  
և միջազգային ինտեգրման գործընթացների ներ-  
կայիս պայմաններում, երբ հասարակական հա-  
րաբերությունների սահմանադրականացման ու  
դրանով պայմանավորված իրավահարաբերու-  
թյունների կանոնակարգվածության աստիճանը  
բարձր չէ, իսկ սահմանադրական մշակույթը գտն-  
վում է ցածր մակարդակի վրա:

Միջազգային կազմակերպությունների վերա-  
պետականության նման պայմաններում պետա-  
կան ինքնիշխանության ոչ իրավաչափ ցանկացած  
սահմանափակում կարող է հանգեցնել սահմա-  
նադրական արժեքների ձևախեղման՝ իր բոլոր  
վտանգավոր հետևանքներով:

Ուստի, առանձնահատուկ կարևորության խն-  
դիր է վերապետականության հիմնահարցի դրսևոր-  
ման առանձնահատկությունների վերլուծությունը,  
քանի որ միջազգային հարաբերություններում վեր-  
պետականությունն ինքնին ոչ միայն արտահայ-  
տում է պետական ինքնիշխանության նշանակու-  
թյան էական կողմը, այլև փոխկապված է վերջինի  
հետ և գտնվում դրա ներգործության տիրույթում:  
Այս առումով պրոֆեսոր Ֆ.Լ.Քրիվզը արդարացիոր-  
բեն նշել է, որ «վերապետականության եզրույթն իր

անորոշությամբ և այդ եզրույթի շուրջ ծագած վեճե-  
րով լիովին համապատասխանում է ինքնիշխանու-  
թյան բովանդակությանը»:

Վերապետականության ծագումն ու գոյությունը  
ինքնիշխան պետությունների միջազգային համա-  
գործակցության պատմական զարգացումների  
օրինաչափ ու օբյեկտիվ արդյունք է: Չնայած այն  
հանգամանքին, որ բացակայում է այդ հասկացու-  
թյան նորմատիվային իրավական սահմանումը,  
այնուամենայնիվ, վերապետականության, որպես  
հասարակական զարգացումների և միջազգային  
ինտեգրման գործընթացների հետևանք, ինքնին  
ենթադրում է ինքնիշխան պետության լիազորու-  
թյունների փոխանցում միջազգային կազմակեր-  
պությանը՝ վերջինիս կողմից այն իրագործելու  
հնարավորությամբ:

Ընդ որում, վերապետական կազմակերպույա-  
նը պետության ինքնիշխան իրավունքների նման  
փոխանցումը չի կարող դիտարկվել որպես պետա-  
կան ինքնիշխանության սահմանափակում կամ  
պետության միջազգային իրավասուբյեկտության  
կորուստ, ինչը պայմանավորված է այն հիմնավոր-  
մամբ, որ պետության ինքնիշխանությունը կարող է  
դադարել միմիայն տվյալ պետության ժողովրդի  
կամասարտահայտման արդյունքում:

Սակայն, պետական ինքնիշխանության և  
վերապետականության հարաբերակցության հիմ-  
քում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. պե-  
տությունը չի կարող մասնակիորեն կամ ամբողջու-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

թյամբ իր ինքնիշխանությունը փոխանցել որևէ միջազգային կազմակերպությանը, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է միայն պետությունը և այն հանդիսանում է վերջինիս հիմնական հատկանիշը:

Այս նկատառումով չպետք է համաձայնվել այն հեղինակների հետ, ովքեր պնդում են, որ պետությունները կամավոր հրաժարվում են իրենց ինքնիշխան իրավունքներից կամ ինքնիշխանությունից՝ ի օգուտ միջազգային այն կազմակերպությունների, որոնց անդամակցում են այդ երկրները<sup>2</sup>:

Իսկ հեղինակների մեկ այլ խումբ հակված է այն պնդմանը, որ վերապետականությունը դա ընդամենը միջոց է «համաշխարհային պետություն» կառուցելու համար<sup>3</sup>, որով մարդկությունը ձգտում է ունենալ իր համար համընդհանուր բարգավաճման ու ծաղկման ժամանակաշրջան<sup>4</sup>:

Բոլոր դեպքերում, անհրաժեշտ է նշել, որ վերապետականության երևույթի օբյեկտիվ հիմքը կազմում են բոլոր ժողովուրդների ու պետությունների միջև աճող փոխադարձ կապն ու զարգացող ինտեգրման գործընթացները: Սակայն, այդ գործընթացներին տարաբնույթ ձևով մասնակցության համար անհրաժեշտ է հաշվի առնել պետական, ժողովրդական ու ազգային ինքնիշխանության երաշխավորման սահմանադրական պահանջը:

Ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, միջազգային կազմակերպություններին պետության ինքնիշխան իրավունքների մի մասի փոխանցման հնարավորությունն ամրագրող նորմեր առկա են հատկապես հետևյալ երկրների սահմանադրություններում<sup>5</sup>:

Այսպես, Ավստրիայի Սահմանադրության 9-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն պետական պայմանագրի կամ օրենքի հիման վրա պետական առանձին իրավունքներ կարող են փոխանցվել միջպետական հիմնարկներին ու նրանց մարմիններին:

Բելգիայի Թագավորության Սահմանադրության 34-րդ հոդվածը սահմանում է, որ որոշակի լիազորությունների իրականացում կարող է դրվել միջազգային հանրային հիմնարկների վրա՝ օրենքով կամ պայմանագրով սահմանված կարգով:

Դանիայի Թագավորության Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ պետության մարմինների առանձին լիազորություններ կարող են վերապահվել միջազգային իրավակարգի և համագործակցության զարգացման նպատակով ստեղծված միջազգային կազմակերպություններին:

Իսպանիայի Սահմանադրության 93-րդ հոդվածը նախատեսում է դրույթ, համաձայն որի Գլխավոր Կորտեսին կամ Կառավարությանը վերապահվում են միջազգային պայմանագրերի կա-

տարումն ապահովելու պարտականություններ, որոնցով միջազգային կամ վերապետական կազմակերպություններին փոխանցվել է համապատասխան իրավասություն:

Իտալիայի Սահմանադրության 11-րդ հոդվածը հռչակում է, որ Իտալիան համաձայնվում է այլ պետությունների հետ փոխադարձության պայմաններում իր ինքնիշխանության սահմանափակում, եթե դա անհրաժեշտ է ժողովուրդների խաղաղության և համերաշխության ապահովման կարգի համար, ... որը կցուցաբերի աջակցություն ու օգնություն միջազգային այն կազմակերպություններին, որոնք ձգտում են այդ նպատակների իրագործմանը:

Ալբանիայի Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ Ալբանիան միջազգային համաձայնագրերի հիման վրա փոխանցում է միջազգային կազմակերպություններին որոշակի հարցերով իր պետական իրավունքները:

Ֆրանսիայի Հանրապետության 92-554 թվակիր սահմանադրական ակտի 88-2-րդ հոդվածի համաձայն՝ փոխադարձության սկզբունքի պահպանմամբ ու Եվրոպական Միության մասին պայմանագրի պայմաններին համապատասխան, Ֆրանսիան համաձայնվում է իր իրավասության մի մասի փոխանցումը եվրոպական տնտեսական ու ֆինանսական միության հիմնադրման համար:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրության 24-րդ հոդվածի 1-ին պարբերությունը սահմանում է, որ Դաշնությունը օրենքով կարող է իր պետական իրավունքները փոխանցել միջազգային հիմնարկներին:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ գրեթե նույնաբովանդակ նորմեր պարունակում են Սլովակիայի, Պորտուգալիայի, Լեհաստանի Նիդերլանդների Լյուքսեմբուրգի և այլ երկրների սահմանադրություններում:

Հիշատակված սահմանադրական նորմերի համակարգված վերլուծությունից, ինչպես նաև նման լիազորությունների փոխանցման պրակտիկայի հետազոտությունից հետևում է, որ՝ ա) միջազգային կազմակերպություններին փոխանցվում են գործառնական բնույթի այնպիսի պետական իրավունքներ կամ լիազորություններ, որոնք կազմում են ինքնիշխան իրավասության մաս, բայց ոչ ինքնիշխանության տարր<sup>6</sup>, բ) սահմանադրական այդպիսի լիազորությունների փոխանցումը պայմանավորված է գլոբալիզացիայի խորացման պայմաններում հատկապես միջազգային ինտեգրման նոր բնույթի գործընթացներ իրականացնող միջազգային կազմակերպությունների այնպիսի խնդիրների իրականացմամբ, որոնք ուղղված են կամ համընդհանուր են հենց անդամ-պետությունների խնդիր-

www.journal.lawinsstitute.am

ների հետ, գ) նման լիազորությունների փոխանցումն անհրաժեշտ է, քանի որ հատկապես միջազգային հարաբերություններում քաղաքականության կամ առանձին արտաքին գործունեների ներգործության պայմաններում դրանք անհրաժեշտ են պետության գործունեության համար կամ կապված են բարդ գործընթացների հետ, որոնք ոչ համաչափ ներգործություն են ունենում պետությունների վրա:

Ինչ վերաբերում է մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումներին, ապա դրանց համընդհանուր վերլուծությունը բերում է այն եզրահանգման, որ միջազգային կազմակերպության վերաբերյալ անհրաժեշտ է բնորոշել և հետևյալ բնութագրիչները. ա) այդ կազմակերպության անդամ-պետությունների շահերի ընդհանրության ճանաչումը, բ) վերաբերյալ կազմակերպության որոշումների ընդունումը անդամ-պետությունների մեծամասնությամբ, գ) վերաբերյալ կազմակերպության ծառայողների գործունեության անկախությունը, դ) վերաբերյալ կազմակերպության ֆինանսական անկախությունը, ե) վերաբերյալ կազմակերպության որոշումների պարտադիր կատարման պայմանը անդամ-պետությունների կողմից և անդամ-պետությունների տարածքում, զ) վերաբերյալ կազմակերպության կազմից միակողմանի դուրս գալու արգելքը, է) վերաբերյալ կազմակերպության լիազորությունների գերակայությունը անդամ-պետությունների լիազորությունների նկատմամբ, ը) անդամ-պետությունների կողմից ինքնիշխան լիազորությունների մի մասի փոխանցումը վերաբերյալ կազմակերպությանը:

Սույն հետազոտության առարկայի համատեքստում այս բնութագրիչների համակարգային վերլուծությունից հետևում է, որ վերապատականությունն անհրաժեշտ է ընկալել որպես միջազգային կազմակերպության իրավական այնպիսի հատկություն, որն ինքնիշխան անդամ-պետություններին հնարավորություն է ընձեռում ազգային օրենսդրությամբ իրենց իրավունքների մի մասը փոխանցել միջազգային կազմակերպությանը՝ վերջինիս հիմնադիր պայմանագրով նախատեսված նպատակների ու խնդիրների իրագործմանը:

Անհրաժեշտ է կարևորել այն, որ եթե վերաբերյալ կազմակերպությունը պետություններից ստանում է գործառնական բնույթի լիազորություններ, ապա խնդրահարույց է դառնում այն իրավիճակը, թե այդ կազմակերպության որոշումները մասնակից պետությունների համար պետք է դիտարկել որպես միջազգային իրավունքի, թե ազգային օրենսդրության նորմեր: Սակայն, հենց այս խնդրին՝ լուծմանն է ուղղված այն հանգամանքը, թե պետությունն ինչպիսի սահմանադրական արգելքներ պետք է հաղթահարի, որպեսզի իր ստանձնած

միջազգային պարտավորությունները ամբողջությամբ համապատասխանի երկրի սահմանադրությանը և միաժամանակ հստակ ուղղված լինի միջազգային կազմակերպության խնդիրների ու նպատակների իրագործմանը:

Գործնականում բոլոր երկրների սահմանադրության ինքնաբավության դոկտրինաները հենց հենվում են այն հայեցակարգի վրա, որ սահմանադրական նորմերի մեկնաբանման հիմքում դրվեն սահմանադրական հիմնարար արժեքներն ու սկզբունքները: Իսկ այդ պարագայում սահմանադրական դատարանը պարտավոր է իրավանորմի սահմանադրականությունը գնահատել իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ, ինչն ընդունված է մաս ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում:

Այսպես, իր 2014 թվականի նոյեմբերի 14-ի ՄԳՈ-1175 որոշմամբ անդրադառնալով 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Միսկում ստորագրված «Հայաստանի Հանրապետության» «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցին, Սահմանադրական դատարանը սահմանադրաիրավական տեսանկյունից պետության ինքնիշխանության հիմնական բնութագրիչներ է դիտարկել պետական, ժողովրդական ու ազգային ինքնիշխանությունը:

Ընդ որում, սահմանադրական դատարանի որոշման տրամաբանության ներքո եթե պետական ինքնիշխանությունը ենթադրում է, որ. ա) պետական իշխանությունն ունի գերակայություն ու անկախություն երկրի ներսում և միջազգային հարաբերություններում, բ) միայն ինքնիշխան պետությունն ունի միջազգային իրավասություն կարգավիճակ, գ) երկրի ներսում ինքնիշխան պետությունն ինքն է սահմանում և պահպանում իր երկրի իրավակարգը՝ անհրաժեշտության դեպքում գործադրելով պետական հարկադրանքի միջոցներ, դ) պետական ինքնիշխանությունը տարածվում է երկրի ամբողջ տարածքի վրա, բացառում է երկիշխանությունը, միակ լեզվալի իշխանությունն է իրականացնում օրենսդիր, գործադիր և դատական գործառույթները,

իսկ ժողովրդական ինքնիշխանության էությունն է՝ ճանաչել ժողովրդի՝ իշխանության միակ կրող ու աղբյուր լինելը,

ապա ազգային ինքնիշխանությունն նշանակում է ազգի իրավունքն՝ ինքնուրույն և ազատորեն որոշել իր մշակութային, սոցիալ-տնտեսական և

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

քաղաքական կեցությունը:

Այս հարցում, միաժամանակ, Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի պահանջները, արձանագրել է, որ պետական ինքնիշխանությունը չի ենթադրում իշխանության բացարձակ անսահմանափակություն, քանի որ իրավական պետությունում այն առաջին հերթին սահմանափակված է մարդու հիմնարար իրավունքներով ու ազատություններով, որոնք գործում են անմիջականորեն, ունեն ինչպես ներպետական, այնպես էլ վերպետական կամ միջազգային իրավական պաշտպանվածություն:

Հայաստանի Հանրապետությունում պետական ինքնիշխանության երաշխավորման և իրացման իրողություններից ելնելով Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ իրավական, ժողովրդավարական պետության կայացման միջազգայնորեն ճանաչված արժեհամակարգային հիմնարար սկզբունքներն են դառնում ազգային իրավական համակարգի հենքը և դրանք բացարձակ չեն կարող լինել և պետք է ունենան տվյալ ազգի ու պետության հիմնարար շահերից բխող ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական չափորոշիչներ, որպիսիք են. ա) իրավական, ժողովրդավարական պետության սկզբունքներին հավատարիմ մնալը, բ) իրավունքի գերակայության երաշխավորումը, գ) ժողովրդի ինքնիշխանության ճանաչումն ու երաշխավորումը, դ) միջազգային ու տարածաշրջանային ինտեգրման գործընթացներին պետության ինքնակամ մասնակցության և դրանից, իր ցանկությամբ ու իր ժողովրդի շահերից ելնելով, հրաժարվելու իրավունքի երաշխավորվածությունը:

Այս տրամաբանությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է նշել, որ ներկայիս պայմաններում պետության ինքնիշխանության ու վերպետականության հարաբերակցության հիմնախնդրի առկայությունը և պետությունների փոխգործակցության օբյեկտիվ անհրաժեշտությունը առաջադրում են այդ հարաբերություններից բխող խնդիրների փոխհամաձայնեցված լուծումներ, ինչը միջազգային և սահմանադրաիրավական հարաբերություններում պետությունների վերպետական գործակցության նոր ձև է, որտեղ յուրաքանչյուր ինքնիշխան երկիր, ինքնակամ մասնակցելով վերպետական կազմակերպություններին, իրենց մասնակցության կամքի արտահայտման միջոցով ապահովում իր իսկ ինքնիշխանության և ազգային շահերի պաշտպանության երաշխավորումը: Դա համահունչ է նաև ՀՀ Սահմանադրության նախաբանով հռչակված ինքնիշխան պետության վերականգնման, հայրենիքի հզորացման ու բարգավաճման, սերունդների ազա-

տության, ընդհանուր բարեկեցության, քաղաքացիական համերաշխության վերաբերյալ համամարդկային արժեքներին Հայաստանի Հանրապետության հավատարմության վերաբերյալ դրույթների բովանդակությունից, ինչով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տարածաշրջանային համագործակցության ու այն ապահովող կառույցների իրավաչափ գործունակության ապահովման հարցերում:

Այս խնդիրների հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ Սահմանադրության թե՛ արժեքանությունից և թե՛ մի շարք կոնկրետ դրույթներից բխում են սահմանադրական հստակ պահանջներ, ինչպիսիք են՝ 1) պետական, ժողովրդական ու ազգային ինքնիշխանության երաշխավորումը, 2) միջազգային հարաբերությունների իրավահավասարությունն ու փոխշահավետությունը, 3) մարդու իրավունքների միայն այնպիսի հնարավոր սահմանափակումների նախատեսումը, որոնք համարժեք են միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին, 4) Հայաստանի համար վերպետական մարմինների որոշումների գործողության հնարավորությունը միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում:

Ինչ վերաբերում է պետության ինքնիշխանությունն արտահայտող անկախության երաշխավորմանը, ապա դա նշանակում է, որ պետությունը հանրային իշխանության լիակատար կրողն է իր տարածքում և չի կարող ենթարկվել այլ պետությունների իշխանություններին կամ միջազգային կազմակերպությունների իրավագործությանը: Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2004 թվականի օգոստոսի 13-ի ՄԳՈ-502 որոշմամբ, 1998 թվականի հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված, Միջազգային քրեական դատարանի կանոնադրության նախաբանի 10-րդ մասով, 1-ին հոդվածով և 105 հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող՝ դատապարտված անձանց ներպետական ընթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը բացառելու հիմքով:

Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունը, ի կատարումն ՀՀ Սահմանադրության նորմերով ստանձնված՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների, չի կարող ստանձնել Սահմանադրությամբ չնախատեսված՝ մարդու իրավունքների սահմանափակման այնպիսի պարտավորություններ, որոնք նվազ բարենպաստ վիճակ կստեղծեն ՀՀ իրավագործության ներ-

քո գտնվող անձանց համար՝ ՀՀ Սահմանադրությանը նախատեսված իրավունքների և ազատությունների երաշխավորման առումով:

Հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է ճանաչեր Միջազգային քրեական դատարանը՝ որպես ՀՀ ներպետական քրեական իրավագործության մարմինները լրացնող ինստիտուտ, ինչը նույնպես չի բխել ՀՀ Սահմանադրության 91-րդ և 92-րդ հոդվածներով ամրագրված նորմերի բովանդակությունից, ուստի այդ կապակցությամբ, Սահմանադրական դատարանը մեկնաբանվող որոշման մեջ կատարեց մի շարք եզրակացություններ, որոնք ունեն էական նշանակություն պետության ինքնիշխանության երաշխավորման համար դրանք են՝ ա) որ արդարադատության իրականացումը հանդիսանում է դատարանների բացառիկ իրավասությունը, բ) Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնող դատարաններն են՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, գ) ՀՀ Սահմանադրության տրամաբանության համապատասխան՝ չի նախատեսվում որևէ դրույթ, որը հնարավորություն կտար միջազգային պայմանագրով լրացնել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված քրեական իրավագործություն իրականացնող դատական մարմինների համակարգը քրեական իրավագործության միջազգային դատական մարմնով՝ վտանգելով մասնակից պետության ինքնիշխանությունը:

Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ 2010 թվականի նոյեմբերի 16-ի ՄԳՈ-924 որոշմամբ կարևորեց ազգային արժույթի դերակատարությունը և այն դիտարկեց որպես պետական ինքնիշխանության հատկանիշ: Ըստ Սահմանադրական դատարանի գնահատման՝ պետությունը հասնում է իրականացվող դրամավարկային քաղաքականության և դրա շրջանակներում իրականացվող արժույթային կարգավորման, որի նպատակն է ապահովել ոչ միայն տնտեսական աճ, այլև պետության տնտեսական անվտանգությունը:

Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության վերաբերյալ սահմանադրական արդարադատության պրակտիկայի վերլուծությունից բխում է, որ, Սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներն արտահայտելիս տվել է տարբեր ձևակերպումներ, օրինակ՝ «ինքնիշխանության անձեռնմխելիություն», «ինքնիշխանությունը որպես սահմանադրական կարգի սկզբունք», «ինքնիշխանության ապահովում», «ինքնիշխանության նկատմամբ հարգանք», «ինքնիշխանությանը սպառնացող վտանգ» և այլն:

Բոլոր դեպքերում ինքնիշխանության գերակա-

յությունը Հայաստանի Հանրապետության տարածքում հանդիսանում է պետության անկախության հիմք, որը կարող է ընկալվել որպես սահմանադրական կարգի սկզբունք, համընդհանուր հարգման օբյեկտ, անձեռնմխելիության տարր և այլն: Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը ընդգծում է այդ հասկացությունների դիալեկտիկ միասնությունը:

Բացի այդ, Սահմանադրական դատարանի մեկնաբանությունների համակարգային վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ դրանք հանդիսանում են առաջին հերթին որպես ինքնիշխանության հասկացության բովանդակության տարբեր կողմեր, այնուհետև, նաև պետության անհրաժեշտ որակական հատկանիշ, որը բնութագրվում է որպես վերջինս սահմանադրաիրավական կարգավիճակի տարր:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության պետականության հիմքը կազմում է իշխանության միասնական համակարգը: Դրանով իսկ դատարանը նախապատվությունը տալիս է պետության իշխանությունների տարանջատման ու միասնականության ընդհանրական սկզբունքի գաղափարին:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրությանը համահունչ և, դրանով պայմանավորված, արժեքական նշանակություն է հաղորդվում միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներից մեկին՝ պետությունների ինքնիշխան հավասարության հարգմանը:

Այնուհետև, ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում քննության առարկա միջազգային պայմանագրի սահմանադրականության տեսանկյունից առանցքային նշանակություն է տվել պետությունների ինքնիշխան զարգացման սկզբունքով ղեկավարվելու պահանջին, որն ենթադրում է կամավորության ու փոխշահավետության վրա խարսխված պարտավորությունների ստանձնում և միաժամանակ այդ պարտավորությունների դադարման հնարավորության գործընթացի նախաձեռնում:

Սահմանադրական դատարանի կողմից դիտարկվող խնդրի համատեքստում ինքնիշխանության, որպես պետության անկախության հիմքի վերաբերյալ հիշատակված եզրակացություններն ունեն էական նշանակություն հայրենական սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական կարգավորումների զարգացման համար:

- <sup>1</sup> Crieves F.L. Supranationalism and International Adjudication. Urbana.1969. P. 10.  
<sup>2</sup> Клемин А.В. Суверенные права государства. М.: 2008, С. 48.  
<sup>3</sup> Леонтьев К.Н. Византизм и славянство. М.: 1992. С. 106.  
<sup>4</sup> Тинберген Я. Пересмотр международного порядка. М.: 1980. С. 85.  
<sup>5</sup> Конституции зарубежных государств. Сборник. Т. 1. М.: 2010.  
<sup>6</sup> Моисеев А.А. Суверенитет государства в международном праве. М.: 2009, С. 375.  
<sup>7</sup> Моисеев А.А. Նույն աշխ., էջ 362-363:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն, Եր., 2005:
2. Конституции зарубежных государств. Сборник. Т. 1. М.: 2010, 656 с.
3. Клемин А.В. Суверенные права государства. М.: 2008, 344 с.
4. Леонтьев .Н. Византизм и славянство. М.: 1992. 288 с.
5. Моисеев А.А. Суверенитет государства в международном праве. М.: 2009, 375 с.
6. Тинберген Я. Пересмотр международного порядка. М.: 1980. 385 с.
7. Crieves F.L. Supranationalism and International Adjudication. Urbana.1969. P. 10.

Արամ Խաչատրյան

Аспирант кафедры юриспруденции академии  
государственного управления Республики Армения

## РЕЗЮМЕ

*Проблемы соотношений государственного суверенитета и надгосударственности международной организации и их решения в практике конституционного правосудия республики Армения*

В статье проанализированы проблемы соотношений государственного суверенитета и надгосударственности международной организации, предложены их решения в контексте практики конституционного правосудия Армении. В работе автором исследованы существенные стороны надгосударственности, также проанализированы основные признаки суверенитета в контексте правовых позиций конституционного суда Армении.

В настоящей статье в результате исследования автором предложены практические рекомендации о приоритетности суверенитета как основы независимости государства, и что аксиологическое значение данной категории составляет принцип международного права по уважению суверенных равноправий государств.

**Ключевые слова:** суверенитет, надгосударственность, практика конституционного правосудия, соотношение государственного суверенитета и надгосударственности.

Aram Khachatryan

Post-graduate of the Administration Academy  
of the Republic of Armenia

## SUMMARY

*The Main Problems of Correlation between State Sovereignty and International Organization's Overstate System. The Solutions within the Practice of the Constitutional Justice of RA*

The article analyzes the main problems of the correlation between state sovereignty and international organization's overstate system and proposes the solutions in the context of the practice of RA Constitutional Justice.

In the article overstate system's characteristics are studied by the author. The analysis of sovereignty main characteristics in the legal position's frame of the Constitutional Court of RA is discussed in the article.

During the article's research, the author comes to the conclusion that supremacy of sovereignty is the basis of state independence. Simultaneously, this independence makes the principle of the general recognition of international law – the respect towards the equality of states' sovereignty valuable.

**Keywords:** sovereignty, overstate system, practice of Constitutional Justice, correlation between sovereignty and overstate system.